ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.12.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/218

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Մասնակից՝ «Ջիէմ Ինժեներինգ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-2/2» ծածկագրով գնանշման հարցում, մալուխների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 21.11.2019թ.-ի թիվ 26/26-1/19190-2019 գրությամբ «Ջիէմ Ինժեներինգ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 19.11.2019թ.-ի թիվ ՊՆ/02/2510-2019 գրության հիման վրա, 21.11.2019թ.-ին «ՋԻԷՄ Ինժեներինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 21.11.2019թ.-ին և նույն օրը կայացված որոշմամբ գործը ընդունվել է վարույթ:

27.11.2019թ.-ին և 06.12.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 06.12.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 12.12.2019թ.-ին:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 19.11.2019թ.-ի թիվ ՊՆ/02/2510-2019 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-2/2» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով «ՋԻԷՄ Ինժեներինգ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: Սահմանված կարգով վերոնշյալ մասնակցին armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցվել է երեք (3) աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ: Սահմանված ժամկետում «ՋԻԷՄ Ինժեներինգ» ՍՊԸ ներկայացրել է պահանջվող փաստաթղթերը, սակայն որոնցում առկա էր անհամապատասխանություն, ուստի գնահատող հանձնաժողովը, Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը 3 աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում «ՋԻԷՄ Ինժեներինգ» ՍՊԸ-ն ներկայացրել է շտկում, որը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է հրավերի պահանջներին

չհամապատասխանող և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները 18.11.2019թ. մերժել է «ՋԻԷՄ Ինժեներինգ» ՍՊԸ-ի հայտը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Ջիէմ Ինժեներինգ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Ջիէմ Ինժեներինգ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 21.11.2019թ.-ին գրությամբ դիմել է «Ջիէմ Ինժեներինգ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.11.2019թ.-ի թիվ 26/26-1/19190-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք:

«Ջիէմ Ինժեներինգ» ՍՊԸ-ի տնօրենը մասնակցելով ՍՑ-LO-2019/218 ծածկագրով ընթացակարգի քննության համար նշանակված նիստին, Բողոքներ քննող անձին խնդրել է տրամադրել 4-5 աշխատանքային օր ժամկետ, որպեսզի Մասնակցի շահերը ներկայացնող իրավաբանական գրասենյակը ծանոթանա ընթացակարգի նյութերին և կարողանա իրականացնել վերջինիս շահերի պաշտպանությունը:

4. <u>ՍՑ-LO-2019/218 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից մալուխների ձեռքբերման նպատակով 19.10.2019թ.-ին հայտարարավել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-2/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Ջիէմ Ինժեներինգ» ՍՊԸ-ն:

Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ.

1. բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-2/2» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին,

2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-2/2» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով նույն դիմում-հայտարարությունում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին և պարտավորվում է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 31.10.2019թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ ընթացակարգի առաջին չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Ջիէմ Ինժեներինգ» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովն առաջին տեղ զբաղեցրած մասնակիցին առաջարկել է ներկայացնել առաջարկված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Մասնակիցը 11.11.2019թ.-ին թիվ 3.1 հավելվածով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով որպես ապրանքի անվանում նշել է՝ Մալուխ՝ Ավվգ 3*50+1*25 (Մալուխ՝ ԱՎՎԳՑ 3*50+1*25), իսկ տեխնիկական բնութագիր՝ ԱԲԲԳ 3*50+3*16:

Հանձնաժողովի 12.11.2019թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Մասնակցի կողմից ներկայացվել են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-2/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթղթերը՝ այդ թվում առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրերը, սակայն «Ջիէմ Ինժեներինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ հավելված 3.1-ը թերի է՝ տեխնիկական բնութագրում նշված է (ԱԲԲԳ

3*50+3*16), իսկ ապրանքի անվանման մեջ՝ (Մալուխ Ավվգ 3*50+1*25), ինչպես նաև տեխնիկական բնութագրում բացակայում է «Ջիէմ Ինժեներինգ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը, ինչով պայմանավորված Հանձնաժողովը հնարավորություն չի ունեցել գնահատելու Մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրի հանապատասխանությունը հրավերի պահանջներին:

Նույն արձանագրության համաձայն՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ Հանձնաժողովը 12.11.2019թ.-ին երեք աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Մասնակիցը 15.11.2019թ.-ին թիվ 3.1 հավելվածով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով որպես ապրանքի անվանում նշել է՝ Մալուխ՝ Ավվգ 3*50+1*25 (Մալուխ՝ ԱՎՎԳՑ 3*50+1*25), ապրանքային նշանը՝ ВИКАБ, արտադրողի անվանումը՝ ПО ЭНЕРГОКОМПЛЕКТ, ծագման երկիրը՝ Բելառուս, տեխնիկական բնութագիր՝ АВВГ 3*50+3*16:

Հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ սահմանված ժամկետում «Ջիէմ Ինժեներինգ» ՍՊԸ-ն ներկայացրել է շտկում, որը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է հրավերի պահանջներին չհամապատասխանող:

Ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրով՝ 1-ին չափաբաժնի համար սահմանվել է Մալուխ՝ Ավվգ 3*50+1*25 (Մալուխ՝ ԱՎՎԳՑ 3*50+1*25):

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.11.2019թ.-ի թիվ 26/26-1/19190-2019 գրությամբ «Ջիէմ Ինժեներինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ... ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Հրավերով նախատեսված է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ նույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված

տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է սույն կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետով սահմանված ժամկետներում: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը...:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը պետք է ապրանքների գնման դեպքում ներկայացնի՝ իր կողմից հաստատված հայտարարություն առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ:

Հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը,

բացառությամբ Կարգով նախատեսված դեպքերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Հայտը գնահատվում է բավարար, եթե ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

Այն դեպքում, երբ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատաս-խանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապա-տասխանությունը: Շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, իսկ չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից մալուխների ձեռքբերման նպատակով 19.10.2019թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-2/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ ներկայացրած «Ջիէմ Ինժեներինգ» ՍՊԸ-ն Հանձնաժողովի 31.10.2019թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության

հիման վրա ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից և վերջինիս առաջարկվել է ներկայացնել առաջարկված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Մասնակիցը 11.11.2019թ.-ին թիվ 3.1 հավելվածով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով որպես ապրանքի անվանում նշել է՝ Մալուխ՝ Ավվգ 3*50+1*25 (Մալուխ՝ ԱՎՎԳՑ 3*50+1*25), իսկ տեխնիկական բնութագիր՝ АВВГ 3*50+3*16:

Հանձնաժողովի 12.11.2019թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Մասնակցի կողմից ներկայացվել են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-2/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթղթերը՝ այդ թվում առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրերը, սակայն «Ջիէմ Ինժեներինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, ինչով պայմանավորված երեք աշխատանքային օրով կասեցվել է նիստը և առաջարկվել է Մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Մասնակիցը 15.11.2019թ.-ին թիվ 3.1 հավելվածով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով որպես ապրանքի անվանում նշել է՝ Մալուխ՝ Ավվգ 3*50+1*25 (Մալուխ՝ ԱՎՎԳՑ 3*50+1*25), ապրանքային նշանը՝ ВИКАБ, արտադրողի անվանումը՝ ПО ЭНЕРГОКОМПЛЕКТ, ծագման երկիրը՝ Բելառուս, տեխնիկական բնութագիր՝ АВВГ 3*50+3*16:

Ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրով՝ 1-ին չափաբաժնի համար սահմանվել է Մալուխ՝ Ավվգ 3*50+1*25 (Մալուխ՝ ԱՎՎԳՑ 3*50+1*25):

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարություն (այսուհետ՝ Հայտարարություն): Եվ եթե Հայտարարությունը որակվի որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնի հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ ներկայացնելով հրավերով սահմանված առաջարկվող ապրանքի՝ տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին իրականությանը չհամապատասխանող հայտարարություն, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ջիէմ Ինժեներինգ» ՍՊԸ-ն Պատվիրատուի կողմից սահմանված շտկման ժամանակահատվածում, չներկայացնելով համապատասխանության շտկումներ՝ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 30-րդ հոդվածի 6-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.11.2019թ.-ի թիվ 26/26-1/19190-2019 գրությամբ «Ջիէմ Ինժեներինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2019/218 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Ջիէմ Ինժեներինգ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**